

ու օգուտ:—Գետ ևս Նրեանը չունի հասարակաց հիւանդանոց, հասարակաց բժշկանոց, հասարակաց դերասաններ (ապսեկ) աղքատանոց (որը գուցէ չունի չիմիւրի և որի համար արդէն մտածուում է), չունի առողջարար ու բաւարարիչ ջուր, տարի ու կէսից աւելի է ունի քաղաքագլուխ, բայց չունի քաղաքային վարչութիւն, ունի բաւականաչափ ուսում ու կրթութիւն ստացած երիտասարդներ, որոնք բոլորն էլ համարեայ արքունի ծառայութեան մէջ են, ցերեկով այդ ծառայութիւնն են կատարում իրանց առօրեայ հացը ծարելու, իսկ գիշերները, տօն օրերին և ընդհանրապէս միջոց գտած ժամին պարապում են կամ բազմի առկարով, որ է թղթախաղը, որը հասարակութեան ամեն կարգերի յետադիմութեան գլխաւոր պատճառներից մինն էմ համարում և որը ոչ այլ ինչ է եթէ ոչ մի տեսակ քաղաքականացած աւագականութեան արհեստ. կամ թէ կեր ու խումով են պարապում, ունենալով իրանց առանձնացած շրջանները:

Ս. ածական և արհեստաւոր դասակարգի մարդիկ նայում են ուսումնական համարված կամ ծառայողների դասի վրա մի շատ անբարձր միտքով. միտքեան կապ չը կայ այդ դասակարգերի մէջ. կրթութեանը չունեն դեռ ևս այնքան լոյս ու չեղմութիւն, որ կարողանան և լուսաւորել և աւարացնել:

Տակաւին խաւարն ու ցուրտն է թագաւորում դասակարգերի յարաբերութեանց վրա:—Նրեանը ունի 3000 տուն ժողովուրդ. աշխարհագրի (կոմերսի) մէջ 1700 տուն հայ, 1300-ը թուրք է հայկած, բայց պէտք է որ աւելի մահմետական հոգիներ լինեն, քան թէ հայեր: Մահմետական պարսիկների ձեռքում է գտանվում հացի, մսի և մրգեղէնի վաճառքը, նաև մեծ մասով պարսկական գործուածների առևտուրը. իսկ արհեստների մեծ մասը, գինեգործութիւնը և Ուսումնական ու Եւրոպայից եկող ապրանքի առևտուր և առը, նաև տեղական բերքերի վաճառահանելու գործը գտնվում է հայերի ձեռքում: Բնականապէս հայերն աւելի հարուստ են և արքունի գանձարանին կրկնապատիկ աւելի տուրք են մատուցանում, քան թէ պարսիկները: Մեծեթների սրահներում և արքունի ու մասնաւոր դպրոցներում ուսանող մահմետական երեխաների թիւը հազիւ 200-ին հասնի. մինչդեռ հայ արական և իգական սեռի ուսանող մանուկների թիւը, արքունի և ազգային ու մասնաւոր դպրոցներում, 850—900-ին է հասնում: Մի ժամանակ բազմով թուշուրսութեան գնացող, կաքաւաւումով պարապող թուրք խաներն ու բէգերը, կամաց—կամաց մոռանալով այդ տեսակ զուարճալի զբօսանքները, անձնատուր են եղել գինեխումբի, թղթախաղի և դատարկակեցութեան, հայրենական կալուածների հետզհետէ վաճառում և փողերը վառնում են. այս տարով ընթացքում այդ խաների մեկից մի վարժապետ թղթախաղում տարել է մօտ 9000 ռուբլի և այսօր ևս շատ բռնակում է տանել: Կարծում եմ որ չի անցնի 30—40 տարի, թուրքերի կալուածների մեծ մասը կանցնի հայերի ձեռքը: Նրեանի թուրք ազգաբնակչութեան մէջ միայն մի հատիկ մարդ եմ ճանաչում որ գգում է իրանց մուսուր և բարոյական կենսքի, իրանց կրօնական, ընտանեկան և հասարակական սովորութիւնների և աւանդութիւնների մահաբեր ու կործանիչ հուր-թիւնը, ոգին:

Քաղաքական վարչութեան բացվելու համար քաղաքը մի 20,000 ռուբլի փոխառութիւն արաւ, որի 2000-ը հազիւ թէ թուրքերից ժողովեց, մինչդեռ 18000-ը հայերը տուին: Բայց ով գիտէ թէ, երբ յաջողի մեղ արժանաւ քաղաքային վարչութեան բացմանը, իրաւասունների կէսը, գուցէ և աւելին թուրքերից կընտրվեն: Այս մասին նորա արդէն նախապարտաւորութիւններ են տեսնում: Կարելի է գուշակել թէ ինչպիսի գոգաւորութիւններ պիտի ծագեն թուրք ու հայ իրաւասունների մէջ, այս կամ այն խնդիրները վճռելու: Բնականապէս ասելով դեռ ևս թուրքերը նախում են հայերի վրա արհամարհական աչքով. դեռ ևս քաղաքացիութեան փոխադարձ մտերմութիւն և հանրական ձեռնառութիւն չէ նշմարվում երկուքին ազգաբնակչութեանց մէջ. այս չափերի առաջը կարող է հանրական կրթութիւնը

փակել. բայց երբ կը լինի հանրական կրթութիւնը:—Հայերը արդէն լաւ թէ վատ թատրոն ունեն, աղջկանց դպրոցներ ունեն. հայ աղջիկը և կինը թատերական բեմի է դուրս գալիս. հայ իգական և արական սեռը թատրոն են յաճախում, բարեգործական ներկայացումների ներկայ են լինում: Խառն նստում են թատրոնում, ընտանեկան խնջոյքներում: հայերը մտածում են ազգային աղքատանոց ու հիւանդանոց հիմնել. ազգային դպրոցներին դրամական զոհաբերութիւն անելուց այլ ևս չեն խնդրում: մտածում են եկեղեցիներից գանձանակ—մանգալը վերջանել և հաստատուն ու որոշ սուրբերով եկեղեցականաց վիճակին ապահովել. պատ չը պահող, տարին երեք—չորս անգամ միայն ժամ գնացող հայերը չեն բամբասվում, այլ ևս շարունակ ժամ գնացող և ծում ու պատ պահող հայերից, մեծ պատին, մի և նոյն սեղանի վրա կարող էք տեսնել պատուան և ուստիտան կերակուրներ. պատ ուսողները և չուսողները միասին նստած և այլն և այլն. բայց այդպիսի երեւոյթները թուրքերը տակաւին շատ և շատ հեռու են...

Հայ օրիորդը ահա ոտքի տակ է տալիս դաւերը նախապարտաւորութեան և յանձն է առնում ազգային արական դպրոցի մէջ վարժուհու պաշտօն վարել: Հայ կինը բացում է իր գլխի ասիական կապոցները, գլուխը յարգարում է եւրոպական ձեով, կանգնում է քաղցրեղէն—խմորեղէնի խանութում, ընդունում է ամեն ազգի և կարգի մարդոց. խօսում, համոզում և վաճառում է. մարդու հետ հաւասար աշխատում է ներսը և դուրսը. և այս ամեն երեւոյթների վրա հայ պառնակաւորութիւնը նայում է հաշտ աչքով. բամբասանքն այնքան զարհուրելի չէ: Համոզված եմ որ երբ մեր խանութները ստանան եւրոպական ձև, մեր կանայքն էլ կը հետեն անշուշտ եւրոպացի կանանց օրինակին, արհեստի և վաճառականութեան մէջ մեծ դեր կը խաղան:

Նրեանի պէս մի քաղաքում այսպիսի երեւոյթները չը պէտք է անուշադիր մնան, այս նախագուշակ երեւոյթները համոզում են մեզ որ շատ չի անցնի, լուսաւոր ազգերին հետևող կը լինի հայոց տարրը, այն ինչ մահմետական տարրը դեռ ևս յառաջագէտ շարժման նշան չէ ցոյց տալիս:

Թէև Նրեանի հայ ազգաբնակչութիւնը համեմատելով թուրք ազգաբնակչութեան հետ վերոյիշեալ եղանակացութիւններին է գալիս մարդ, բայց երբ որ տեղին հայ տարրը քննելու լինենք, ինքն ըստ ինքեան, իսկոյն այն եղանակացութեան կը գտնէ որ երեւանցի հայը շատ բանով ետ է մնացած իր աղէքսանդրապոլսի, աստաղեպոլսի, դարբասի, զոլարցի, թիֆլիսի և այլ քաղաքացի եղբայրներից. դեռ ևս երեւանցի հայի մէջ նշմարվում է պարսկական ոգի, ասիական գանդաղոտութիւն, անտարբերութիւն:

—Գետ ևս մի հիմեղ-վեց մարդ չը տեսայ որ հասարակաց կամ գոնէ հայերի վերաբերեալ գործերի մասին, իբրև հայ, խօսէր այնպէս և գործէր այնպէս ինչպէս որ իր սեփական գործի մասին կարող էր խօսել և գործել: Պատուի և բարոյական պարտաւորութեան վրա հիմնված պաշտօնը երեւանցի հայն այնպէս ճիշդ ու եռանդով չէ կատարում, ինչպէս որ կատարում է փողաւոր պաշտօնները: Երգային հիմնարկութիւնների համար պատրաստ է փող նուիրել, եթէ ուզող լինի և ուզողն էլ ազգեցութեան տէր մարդ լինի. բայց եթէ այդ նուիրած փողերը վերցնես ջուրը ձգես, վատես, ուտես, ուրանաս, երեւանցի հայը պարապ ժամանակ, բուլ-վարի նստարանների վրայից՝ ծամն ծամելով կը խօսի որ կերար, քանդեցիր, զրկեցիր, խղճում չը կատարեցիր յանձնառած պաշտօնը, բայց հազիւ թէ գայ ու լրջմտաբար հաշիւ ու համար պահանջէ քրեանից: հազիւ թէ վատութեանը համար դատի և դատաստանի ենթարկէ քեզ ու լաւութեանը համար էլ հրապարակական շքանշակաւորութիւն մատուցանէ քեզ. ահա, այս է որ ես անտարբերութիւն եմ անուանում:

Բայց նշաններից երեւում է որ այս անմիթար յատկութիւնը հետզհետէ պակսելու վրա է. գլխաւոր միթիարական կէտը նշմարվում է նրանում որ՝ ամեն երեւանցի խոստովանում է իր անտարբերութիւնը հասարակաց գործերի մէջ: Սխալում:

ՆԵՆՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Մի քանի շարավթ է արդէն որ ԹԻՖԼԻՍԻՍ անտանելի շք է անում: Նի՞ժէ պղպխի և զանակը շարունակվի, կարող է երաշտութիւն լինել և կարող են մեծ հիւանդութիւններ պատահել: Թիֆլիսի նահանգում երեւցաւ մորիս և նոյնպէս դաշտային միներ անխնայ ոչնչացնում են ցանքերը:

Շնորհակալութեամբ ստացանք ներկայ 1879 թ.ին ՎԱՊԱՐՇԱՊԱՏՈՒՄ տպված պ. Կ. Կոստանիցի հայերէն բրոշուրը «Հայոց հեթանոսական կրօնը» վերնագրով:

ՋԱԲԱՍԱԼԻՑ մեզ հաղորդում են, որ պ. Մելիք-Մուրադեանցը փոխանակ իր վախճանված ամուսնի թաղման համար աւելորդ ծախսեր անելու նուիրեց 100 ռուբլ յօգուտ տեղական ուսումնարաններին:

Կրակի, ապրիլի 22-ին ԹԻՖԼԻՍԻ Սօբրա-նիայում պ. Արքար Յովհաննիսեան կարգաց մի հրապարակական դասախօսութիւն հայերէն լեզուով ժողովների հայեացքները հայերի մասին: Դահլիճը լի էր: Դասախօսութիւնը լաւ էր կազմված, թեթեւ, հասկանալի ոճով կարդացված: Հասարակութիւնը շատ զոհ մնաց այդ դասախօսութեան:

ՇՈՒՇՈՒՑ մեզ գրում են. «Ձեզ յայտնի է, որ այստեղի հասարակութիւնը խնդիրը ներկայացրեց Կովկասեան ուսումնարանական վարչութեանը իշխական ուսումնարան բանալու մասին: Վարչութիւնը պատասխանեց, որ ուսումնարանը կարելի է բանալ 1880 թ. յունվարից, միայն մինչև այդ ժամանակ շուշուքի պէտք է պատրաստեն մի շինութիւն, վճարեն տարեկան 5000 ռուբլ իսկ եթէ կամենան որ տեղական լեզուներն էլ աւանդվեն ուսումնարանի մէջ պէտք է տարեկան 9000 ռուբլ տան:»

Մեզ հաղորդում են ԵՐԵՎԱՆԻՑ, որ այնտեղի հասարակութիւնը մտադիր է մի խնդիրը ներկայացնել Նորին Վեհափառութեան Վահան վարդապետ Բատումանին թեմական առաջնորդ նշանակելու մասին: Ցանկալի կը լինի, որ Նորին Վեհափառութիւնը կատարէր երեւանցիների խնդիրը: Այժմեան թեմական առաջնորդը իր ծերութեան պատճառով գործիքը չէ կարողանում կատարել:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԹԻՒՐԿ ԿԱՌԱՎԱՐՄԵՆԵՐԸ ԵՒ ՋԵՅՈՒՆԻ ՄԷՋ ՊԱՏԱՀԱՄ ԱՆՑՔԵՐԸ

Վեհ. Սուլթանին կառավարութիւնն որքան կաշխատի երկրին վերաշինութեան ու բարօրութեան միջոցները անօրինելու և իւր ամեն կարգի ժողովուրդը վիճակը բարոյութեան, նմանապէս եւրոպական տէրութիւններն ալ վերջին արինուուշտ պատերազմին ետև որքան իրենց ուշադրութիւնն Արեւելքի վրայ դարձուցած, Բ. Դրան ջանից օժանդակելու և բարեկարգութեանց դործը զիւրացնելու փոյթ կը ցուցնեն, այնքան ընդհակառակն՝ որ քան զօր կաճին ու կը սաստկանան Ասիոյ մէջ ամեն տեսակ կեղեքումները բռնութիւնը և զերծմունքը: Պատճառ.— վառն զի միայն Բ. Դրան բարի գգացումներն ու կամքն ինչպէս նաև Պերլին դաշնադրին ինքին չեն գօրծ այս մեծ գործը պատկերու, այլ տէրութեան կամքը, աշխարհավարութեան ոգին, Պերլինի դաշնադրին նշանակութիւնն և երկրին ճշմարիտ շահն ու օգուտն ըմբռնող պաշտօնեայք պէտք են՝ ոչ միայն կեղրոնական կառավարութեան զուլին, այլ և ներքին վարչութեան ամեն ծիւղերուն մէջ, որպէս զի ամենքն ալ իրենց ընթացքով պատասխանեն վեհապետին գգացմանը, գործակցին Բ. Դրան ճիւղից, և այսպէս հաւաքաբար, մի և նոյն տեսակետով ամենքն երկրին վերաշինութեան աշխատին: Սակայն գաւառաց մէջ այնպիսի պաշտօնատարք կան, որք տէրութեան աշխարհավար

ութեան պահանջներուն անտեղեակ, ժամանակիս ուղղոյն և պիտոյից անգէտ, տէրութեան ծառայել կը կարծեն թոյլ տալով որ քրիստոնեայ ժողովուրդը վրայ ամեն չարիք գործուին, և անոնց հեղինակներն անպատիժ թողուին:

Այս տեսակ պաշտօնատարներն են մեր երկրին բոլոր աղետից պատճառ, և կը համարձակվեմ ըսել նաև շարժառիթ վերջին պատերազմին. ասոնք են որ պայքան աւերումենք ի՞նչ ետև՝ մէկ կողմէ կը շարունակեն տակաւին երկիրն աւերել՝ անոր դարգացման տարրերը չքայնելով, և միւս կողմէ փաստ կը մատակարարեն Թուրքիոյ թշնամեաց ձեռքն, որը այդ կեղեքումներն ու զեղծումները պատրակ բռնելով՝ Օսմանեան կառավարութիւնը կը դատաւիտեն և աշխարհի առջև անոր յարգը կոտորելու կաշխատին: Հայկալի կուսակալն այս կարգի պաշտօնատարներէն մինն է: Հայոց ազգին դէմ մասնաւոր ատելութիւն մ'է Ունիոյ թշուառ ժողովուրդը փնայնելու մասնաւոր փոյթ մը կարծես ուսնենալով, ոճրագործներն ու աւագաններն անպատիժ կը թողու, անոնց գոհերը կը խոշտանդէ, մինչև իսկ կը համաձայնի Բ. Դրան հեռագրական հրամաններուն անաստել, և խեղճ Ունիցիները մուծ բանտրու մէջ փրտեցնել: Իւր կուսակալութեան սահմաններուն մէջ ամեն օր կը շարունակուին թշուառ Հայոց դէմ բռնութեան փորձեր, և տակաւին Հայկալի կուսակալը, կը համարձակի Բ. Դրան առջև պնդել թէ Հայերն են յանցաւորս: Ահաւասիկ քանի մը նոր իրողութիւններ ալ:

Ա. Ձէյթլիկունի չեջակայ Ալապազ գիւղի բնակիչ Ջօպանեան Սարգիս անուն անձին վրայ կը յարձակի Պէշէն անուն Թրքարնակ գիւղէն Կէօմէ՛ Մուսապիա անուն անձն իւր զինակցներով, և անոր բոլոր գոյքը կողպտել ետև՝ զինքն ալ ապանել ժողովուրդի միջոցին՝ Սարգիս կը յաջողի ձողպարել անոր ձեռքէն և խոյս տալ՝ երկու տեղէն մարմինը ծանրապէս վիրաւորուելով:

Բ. Մի և նոյն Պէշէն գիւղէն տասն և վեց թուրք՝ ամենքն ալ զինեալ՝ Ալապազ գիւղին վրայ յարձակելով՝ Վարաճեան Վարդան աւուն Հայու մը տունը աւարի կուտան: Վարդան կը յաջողի իւր կենսքը ազատել խոյս տալով իսկ կինը ծանրապէս կը վիրաւորի:

Գ. Այս չարագործաց հրուսակն Ալապազի Կուտիկեան Նիլա անուն անձին տունը կը կողպտեն, այծերամալը կը յափշտակեն, և այս անձն իւր ընտանեք յետին չքաւորութեան մէջ է այժմ:

Ալապազի Պուքեան Վարդապետին տուն կը կոխեն, ինն կով և երկրագործ եղներ կը յափշտակեն կը տանին: Այս չարութեանց հեղինակներն ալ մի և նոյն անձերն են դարձեալ:

Ն. Մի և նոյն չարագործաց հրուս ձիահանի կամուրջին քով երկու ջորեպան Ունիցիներու վրայ յարձակելով՝ կը կողպտեն զանոնք, և անոնց կենդանիներն ու երկու բուռ աղ կը յափշտակեն կը տանին:

Ձ. Մարաշէն ժամ մը հեռաւորութեամբ տասն Ձէքէզ գողութիւններ իրկուան դէմ հինգ ձեռնըցի հայերու վրայ կը յարձակին որոնք ձեռնըցի ջորիներով տակտակ կը փոխադրէին ի Մարաշ: Ձէքէզները զանոնք կը խոշտանգեն, և անոնց զոյքն ու բեռներաճ կենդանիներն յափշտակելով կը տանին: Կողպտուող հայերը բողբը կը բառնան տեղական կառավարութիւնն, բայց ի զուր:

Է. Մարաշի մէջ գողութիւնները սովորական գործած են: Կիշեր մը ութ Ձէքէզ հացագործ Ղապաքեան Սարգիս անուն Հայուն տունը կը մտնեն, Սարգիս և իւր որդին կը դարձնուն տանը մէջ տիրած աղմուկէն, և չարագործները տեսնելով որ չի պիտի յաջողին տունը կողպտելու, դաշնալով կը վիրաւորեն երեքն ալ և կը փախան:

Ը. Մարաշու բնակիչներէն Պատրիարքին Սիւլէյմանի որդի Ահմէտ քանի մ' ընկերներով Սարմէնեան Մելքոնի տունը կը մտնեն, և կիներ առեւանգելով լեռը կը տանին: Տասն և մէկ ժամ յետոյ կիներ կարծակուի անպատուեալ... Ահմէտ կը բանտարկուի, բայց քիչ ատենէն իւր անմեղ արձակուրդ կը ստանայ:

Ահմէտի այս տեսակ և աւելի ժանտազոյն խժոժութիւններ կը գործունէն շարունակ չափեր կուտակալութեան մէջ Հայ ժողովրդեան վրայ, և երբ Հարստահարանը ձայն կը բառնան, չափեր կուտակալ ակնյծ կը խփէ. իսկ երբ իրենց կեանքն ու պատիւը պահպանելու ճիգ մը կընեն, իսկոյն ապա տարբերեալ զոյն կուտայ գործին, կը բանտարկէ զանոնք և Հայ զինուորէից վրայ արշաւանքներ կը պատրաստէ, որպէս զի Բ. Կըրան կարծել տայ թէ յիշխողութիւն մը զգած է ինք, և աշարժը պաշտօնատար մ'է, և կը սրտմտի երբ Պատրիարքեան անոնց անմեղութիւնը Բ. Կըրան ճանչցնելու միջոցներ 'ի գործ կը դնէ:

Ըսինք և նորէն կը իրկենք. չափեր կուտակալին պէս պաշտօնատարներն այնքան վրտանաւոր են Տէրութեան, որքան չեն կըրցած լինել անոր ոտիններն:

Տէրութեան մը փառք և ոյժն իւր ժողովրդոց բարեկեցութեան զարգացման և ընդհանուր միութեան մէջն են, որը կառավարութեան արդարութեամբ կրնան ձեռք բերել: Իսկ այս պաշտօնատարներ թող տալով որ չարիքներ ու կեղեքումներ գործունէն այս ցեղին կողմէ ուրիշ ցեղի մը դէմ, ամենքը մէկն և անոնց հետ բոլոր երկիրը թշուառութեան ու աւերմանց կը մատնեն, և մի և նոյն երկրին զաւիններ իրարու դէմ ատուելութեամբ բորբոքելով անոնց միաբանութեան յօդակալը կը խցնէ:

Այս պաշտօնատարները չեն կարող այլ ևս այս ոգով այս քաղաքականութեամբ, և այս ցեղային նախապաշարմանքով մեր Վեհ. Սուլթանին աշխարհաշէն արամալութեանց և Բ. Կըրան աշխարհաշէնութեան ընթացից պատասխանել. ուստի և բարեկարգութիւնն առաջ զանոնք պաշտօնէն արձակելով պէտք է սկսել:

ԿԻԼԻԿԻԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

Արդէն քնն ամէ յառաջ մի ընկերութիւն կազմուած էր Նահապարեան վարժարանի և ընտանոց և եռանդուն աշակերտներէ, նպատակ ունենալով մի վարժարան հիմնել Կիլիկիայի ձաճին քաղաքին մէջ, ուր կրթական գործն բնաւ կարեւորութիւն չէր ստացած: Նահապարեան վարժարանի ծնունդն եղող այդ ընկերութիւն, որ Վարդանան կը կոչէր, յաջողեցաւ հասնել իւր նպատակին և բանալ իւր դպրոց: Ձեռն ուղեր աստ պատմել ընդ երկար այն անցեալ, զոր ունեցաւ այդ միութիւն, այլ սա կը փութամ ասել թէ Վարդանան դպրոցն ինն տարիէ ի վեր կը յարատեւէ, մերթ մի պարզ անհատի մասնաւոր աշխատանքով և ծախքով և մերթ մի եռանդուն Հայ խումբի հաւաքական ճիգերով: Սակայն վերջերս ընկերութիւնն գրեթէ խանգարուեցաւ բոլորովն և իւր դպրոց մի այնպիսի վիճակ առաւ շատ, հեռի է զհասցուցիչ լինելէ:

Այս անհոգութիւն և այս վհատութիւն մի գործի մէջ, որ այնքան կարեւոր է, չէր կրնար անտարբեր կերպով նկատուիլ այն հոգիներէ որը համոզուած են թէ կրթութիւնն է որ փրկութիւն պիտի տայ մեր ազգի, ուստի մի քանի Հայ երիտասարդներ ուղեցին դարձան տանիլ այս ողբալի վիճակի, ոյր շարունակութիւն պիտի փակէր Վարդանան դպրոցն. նոքա միացան, խօսեցան և խորհրդակցեցան և զգացին թէ այս գործի մէջ կարող են աւելի հզօր աջակցիլ. և վարանս

ցան նոքա, իսկոյն դիմեցին Ս. Պատրիարքին, վստահ նորա ազգասէր հոգիի աջակցութիւն և խորհուրդներ խնդրեցին 'ի նմանէ և նա չը զլացաւ զայնս նոցա: Նա մի զիտաւոր պաշտպանն էր եղած Նահապարեան վարժարանին. նա շարունակեց իւր պաշտպանութիւն այն երիտասարդ խումբի, որ գրեթէ այդ սրբավայրի մէջ ընդունած էր իւր կրթութիւն և անտի էր քաղած իւր Հայրենասիրական զգացումներ: Ս. Պատրիարքն խորհուրդ տուաւ նոցա նախ Նահապարեան վարժարանի աշակերտներով վերակազմել այդ միութեան, և իսկոյն մի նամակ գրեց ուղղեալ Նահայն աշակերտներն այդ վարժարանի, որով կը յորդորէր զայնս զալ ստուարել այդ ազգագոյն ակումբ և աշակցիլ այն մեծ գործի, ում պիտի ձեռնարկէր այդ ընկերութիւն:

Ս. Պատրիարքի գրած նամակն ստուարելով ցրուեցաւ 100-ի չափ Նահապարեան աշակերտի, և այս նորակազմ ընկերութիւն երէկ կազմեց իւր առաջին նիստ, ուր, հակառակ օրին որ կանձրէր, 40-ի չափ ընկերներ ներկայ էին: Ս. Պատրիարքն իւր կողմէ փութանորդ էր յղած Գեր. Սրուանձտեանց Գարեգին վարդապետն, որ կը նախագահէր ժողովին: Այդ աղետալութիւն և ազգասէր եկեղեցական մի քանի խրախուսիչ բառերով բացաւ Կիլիկիան ակումբի առաջին նիստն, ուր կարգադրուեցաւ նախ մի երկար տեղեկագիր, որ կը պատմէր թէ ինչպէս և ուր կազմուած էր Վարդանան ընկերութիւնն, թէ ոյր եղած էին նմա համար աշխատողներն, թէ Վարդանան դպրոցն ինչ վիճակի մէջ կը գտուէր, և այլն: Այս տեղեկագիրն ընթերցումն յետոյ ժողովն զարտեմբ քուէով ընտրեց իւր դիւանի անդամներն, գործադիր ժողովն և գանձապետն: Ժողովն պիտի վերադնէր և վաւերէր թէ և իւր կանոնադրութիւն, այլ ժամանակն ու լինելով այդ գործ յաջորդ նիստին թողուեցաւ, որ երկու շաբթի պիտի գումարուի: Այն ատեն Գեր. Սրուանձտեանց Գարեգին վարդապետ ոտքի ելնելով կըրկէր խրախուսեց ընկերութիւնն սա վստահանալ ցոյց տալով նմա. «Վիճակիւն, Յարաւուրութիւն և Խոհանութիւն» նորն տիր առնանալն, Պ. Միտա Ձերադ, 'ի դիմաց Կիլիկիան ընդհանուր ժողովն շնորհակալիք յայտնեց զերապատիւ Սրուանձտեանցի, որ չէր մերժած նախադրեալ ժողովին և իւր քաջաբերէ յորդորներ չէր զլացած նմա, խնդրելով 'ի նմանէ, որ փոխանորդապետներ կայացունէ Ս. Պատրիարքին այն երախտագրութեան զգացումներ, որովք համակուած են Կիլիկիան ակումբի անդամներն: Ս. Պատրիարքն, որ հաճած էր զօրավիզ կանգնել նոցա և ոյր շնորհիւ էր որ զօրացած էր Վարդանան ընկերութիւնն և վերածնած Կիլիկիան անունի տակ:

Այսպէս ահա մի նոր ընկերութիւն ալ կը կազմուի, մի ընկերութիւն որ Հայ ազգի կենսական պէտքերէն մին պիտի զայ լնուի: Նս այնպէս կը հաւատամ թէ ամեն ազգասէր Հայ պիտի փութայ յօժարակամ աշակցիլ նմա, մանաւանդ բոլոր այն Նահապարեան աշակերտներ, որք նամակ չեն ստացած կամ չեն կրցած ներկայ գտուիլ երէկի նիստին:

Արդ, վերջացուելով յօդուածս, իբր պարզ Հայ անհատ և իբր պարզ անդամ Կիլիկիան ակումբի, խորին շնորհակալքեալ կը յայտնում հրապարակաւ Ս. Պատրիարքին, որ իւր աջակցութեամբ կազմակերպեց այս նոր միութիւն, և կը մաղթեմ որ նորնաւոր դիւանն և գործադիր ժողովն գործեն սա վստահանալն նոյն զոր մասնակի առաւ նոցա Գրիստոսի մի արի զինուորն: «Միութիւն, Յարաւուրութիւն և Խոհանութիւն»

(Մասիս)

ՆԱՄԱԿ ԹԻՒՐԿԻՍՏԻՑ

Կ. Պօլս 9 ապրիլի

Ուստի յիշեցէ՛ք, Կայսեր. նկատմամբ Պօլսոյ Հայ ժողովուրդին ցոյց տուած համակրանքն այս աւուր ինչիւրն է: «Մասիս» մէջ կը կարդանք Լ. օպանօֆ իշխանի պատասխանն առ Պատրիարք: Ապրիլի 7-ի շաբթի Լ. օպանօֆի տօն, Պատրիարք Սրբազանը հանգիստաւոր պատարագ մատոյց Բերայի Ս. Լէրբորգութեան եկեղեցին, գոհունակութիւն յայտնելու համար Կայսեր դէմ եղած դաւաճանութիւնն 'ի դերն ելելուն: Փութով արտաքոյ կարգի պատրաստութիւններ տեսնուեցան այդ հանդէսն խիտ շքեղ կերպով կատարելու նպատակաւ: Բոլոր Հայոց եկեղեցիներու իմաց արուեստն որ ամենէն ծանրագին և գեղեցիկ զգեստներն խրկեն 'ի Բերա: Տերացուներու մէջէ խիտ ընտրութիւն եղաւ, նոյնպէս զատուեցան շատ գեղեցիկ ձայն ունեցող քահանայներ և վարդապետներ, սոքա ամենքն դպրութիւն անելու և պատարագի սպասուորել կոչուեցան: Եկեղեցին զարդարուեցաւ շքեղ կերպով: Միայն զարդարանքի համար 300 ռուպլի ծախս եղաւ: Ուստի նաւաւ պաշտօնայիններ գիշերն 'ի բուն Հայոց հետ միասին աշխատեցան զարդարանք. եկեղեցւոյ դռներն Ուստի արձիւնեցով և դրօշներով պատկուած էին: Ընտանեաց ժամ 7-ին արդէն անհուն բազմութիւն մը սկսած էր խոնել եկեղեցին: Պատրիարք Սրբազանը կը պատարագէր անձամբ, երկու եպիսկոպոսներ կեցած էին երկու կողմը, երկուստեան վարդապետք սպասաւորութիւն կանէին, քառասուն տիրացուներ դպրութիւն. առաջին անգամն էր որ այսպիսի ներդաշնակ ձայներ կը լսէինք, և հայկական արարողութեան երգեցողութիւնը բոլորովն օւրիշ կերպ կը հնչէր մեր ականջներուն:

Ժամը 9 1/2-ին Ուստի զեսպան իշխան Լ. օպանօֆ մտաւ եկեղեցի գեսպանատան պաշտօնայիններ 'ի միասին, ուստ զինուորական աստիճանաւորք, «Թաման» շոգենաւի պաշտօնակարներ, գերմանական դեսպանի Լ. Թարգման և տիկին (Նու) (զի գիտեք որ իշխան Լ. օպանօֆ կին չունի): Հայ աղետալանաց պատգամաւորութիւն մը և Կար-Պէյ արքայան ընդունելով զգեսպանն բերին 'ի դասն, ամենքն ալ իրենց համագեստներն հողած էին: Գեսպանին մի կողմէ էր խրիման սրբազան, և միւս կողմէ Կար-Պէյ Խորէն սրբազան, որ կը թարգմանէր արարողութիւններն: Տաճարին մէջ կանոնաւոր կերպով կեցած էին Հայ աղետալանք, ինչպէս նաև Հակահատուած Հայոց երեւելիներն. տիկին Կեօզէ կ'ընկերանար տիկին Շուրի: Գեսպանն և բոլոր ժողովուրդն արտաքոյ կարգի պատկառանք ունեցելով էին: Ընդատանի կատարուեցաւ և Սրբազան Պատրիարքը իւր բարեմաղթութիւններն արաւ վառն կենաց Լէքսանդր Կայսեր:

Հետ աւարտման Ս. Պատրիարքի, Ժամարար Սրբազանը շնորհապատեալ եպիսկոպոսներէ և վարդապետներէ դուրս կելլէր: Իւր ետեւէն կուգային դեսպանն և պաշտօնայեք, յետոյ Հանդիսականներն: Ուղղակի թաղական խորհրդաւանդ գացին ու պարտուպատշած պատիւն եղաւ: Գեսպանն անհուն գոհունակութիւն յայտնեց, բաւական տեսակցութեան վերջ մեկնեցաւ. բայց կառք մտնելու միջոցին չէր գիտէր ինչ անել այնքան խուռն էր Հայոց բազմութիւնը: Լէվանդ—Հէրալտ կասէ թէ 20,000-էն աւելի Հայեր էին որ լեցուեր էին եկեղեցին, բակը և բոլոր շրջակայ փողոցներն, այդ քսան հազար բերաններն միաձայն կեցցէ Լէքսանդր Կայսեր կը գոչէին. դեսպանն յուզեալ էր:—Կոյն օրն անմիջապէս Լ. օպանօֆ Կայսեր հեռաքանդ այս հանդիսաւոր արարողութիւնը և Հայոց առ Կայսերն տաճած համակրանքն:

Լ. օպանօֆն այնքան կանոնաւոր, այնքան շքեղ եղաւ որ թէ Հայք և թէ օտարականք սքանչացան: Հայերը օրն կիւրակէ Գանար յուշեց եկեղեցւոյ մէջ ևս «քեզ Լ. օպանօֆ» երգուէր է և դեսպանն ներկայ գտնուած է, սակայն յունաց բոլոր փառաւորութիւնը իբր ստուեր մը երեցած է մեր հանդիսին նկատմամբ, և դեսպանատան մի թարգման ասաց որ դեսպանն շատ դժգոհ է որ յոյնք Հայոց պէս փառաւոր կերպով կարող չեղան կատարել իրենց հանդէսն:

Հոյնք կառավարութեան գիմելով հրաման

ինդրած էին իրենց եկեղեցւոյն մէջ օտար վեհապետի մը համար աղօթելու. սակայն մեր պատրիարքարանը աւելի արքութեամբ շարժելով իւր ազատ եկեղեցւոյն մէջ թրքաց միջամտութիւնը տեսնելու հարկ մը չէր գտնէր. Պօլսը սաստիկ կը զայրանայ. Բերայի թաղականութիւնը որ եկեղեցւոյ ինդրանաց վրայ ոստիկանութեան գունդ մը երկած էր եկեղեցին խիտ յանգիմանութիւն կընդունի Պօլսն. Պօլսը այժմ կը հարցնէ թաղականութեան թէ ինչպէս համարձակեցար, կամ թէ խաբուեցար, ու մեղսակից եղար Հայոց Պատրիարքին, մինչդեռ նա առ ոչինչ կը գրէ կառավարութեան կանոններն: Տակաւին այսօր պիտի իմանամք թէ թաղականութիւնն ինչ պիտի պատասխանէ:

Հայկակ

ԻՄԱՌՆ ԼՈՒՐԵՐ

Մեզ խնդրում են յայտնել, որ ապրիլի 29-ին, կիրակի օրը, յօդուտ Հաւաքարի սուրբ Միքայի եկեղեցւոյ ծխական սուսնարանի Հայ սիրողները ներկայացնելու են ԹԻՖԼԻՍԻ Կերմանական կրօնի զահլիճում ծուշանիկ ողբերգութիւն և «Հայ իմ կորած յիսուն տակ» վոքովիլը: Տոմարները կարելի է սրտանայ Կերմանական Կրօնական Կոնգրէսը (Սրբորոշու Գալէրէում):

Ս. ՊԵՏԵՐԲՈՐԳ, 20 ապրիլի: «Правит. Вѣстн.» լրագիրը հաղորդում է, որ զանազան վարակիչ և յանկարծական հիւանդութիւնների առաջն առնելու համար, իրաւունք է տրվում զաւառական և գիւղական համայնքներին, տեղական պոլիցիայի համաձայնութեամբ օրէնքներ հրատարակել, որոնք զաւառական բնակիչների վրա պարտք կը դնեն հասնել հրապարակների, ծանապարհների, բաւկերի, լճակների, գործարանների և ուրիշ հիմնարկութիւնների մաքրութեան վրա, մի և նոյն օրէնքների հիման վրա արգելվում է, որ ննջեցեալներին դազաղի երեսը բաց անց կացնեն փողոցներով:

Ս. ՊԵՏԵՐԲՈՐԳ, 20 ապրիլի: Պետական բանկի 5% տոմսը առաջին շրջանի արժէ 97 ռ., երկրորդ 96 ռ. 37 կ., երրորդ 96 ռ. չորրորդ 96 ռ. ներքին 5% առաջին փոխառութեան տոմսը արժէ 240 ռ. 50 կ., երկրորդ 234 ռ. 50 կ., արեւելեան առաջին փոխառութեան տոմսը 93 ռ. 50 կ., երկրորդ 93 ռ. 50 կ., ոսկի 8 ռ. 55 կ.: Ռուսաց 1 ռուբլ կոնյոնի վրա արժէ 22,24 պէտ. ռուսաց 100 ռուբլ Գերմանիայի վրա արժէ 196 մարկ. Փարիզի վրա 241 Ֆր. 50 սանտիմ: Տրամադրութիւնը թող է:

Ս. ՊԵՏԵՐԲՈՐԳ, ապրիլի: «Правит. Вѣстн.» լրագիրը հաղորդում է, որ Կայսրը թող տուել, որ Օրէնբուրգ քաղաքի հրդեհից վրէպածներին համար ամեն տեղ ստորագրութիւններ բաց անեն: Ս. Պետերբուրգի պատերազմական ատեանը ապրիլի 13-ին Վիլնան ստորանդակիլ գնդի հրաժարված պողպատու չիկ Գուբրովին մեղադարտ գտնելով, այն բանի մէջ, որ այս վերջինը գէնքով ընդդիմադրութիւն էր գործել այն անձինքների դէմ, որոնք յանձնարարութիւն ունէին խուզարկութեան երկարել Ստարի-Ռուսիայի գաղանի չարամիտ ընկերութեան իրեղենները, դատաւարտեց կախաղանի: Նրէկ Պետրովովովի բանտում, առաւօտուայ 10 ժամին կատարվեցաւ պատերազմական ատեանի վճիռը:

Խմբագիր-Հրատարակող ԳԻՐԳՈՐ ԱՐՄԵՐՈՒՆԻ

Յ ինքին **Ա** մեկը, մեծ տալիս **Տ** առ **Բ** րդին **Ա** լույս **Բ** ում **Ի** դեր **Թ** միջոցով **Ի** միջանակ **Ն**

„ՄԵԼԿ“

ԳՐԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՐԱԳԻՐ

1879 [ԹՎԻՆ]

ԿՐ ՀՐԱՏԱՐԱՆԿՈՒ ԵՄԵՆ ՕՐ, բացի սոն և սոնների հե-
տևեալ օրերից:

Լրագրի զիջքը և պրոգրամման նոյն են մնում: Մենք ստանում ենք ՍԵՓԱԿՆՆ ՀԵՌԼԳԻՐՆԵՐ: «ՄՇԼԿԻ» տարեկան զինը 10 թուր է, կէս տարւան 6 թուր: Գրվել կարելի է ՄԻԸՅՆ ԽՄԲԱԳՐԱՏՈՒՄ, մէջ:

ԵՌԱՆՁԻՆ ՀԵՄԵՐՆԵՐԸ ծախվում են 5 կոպեկով հատր.
Օտար քաղաքներից պետք է դիմել հետևեալ հասցեով ТИФ-
ЛИСТ Редакция «Мшакъ».

Խմբագիր—Հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ПОТИ-ТИФЛИССКАЯ ЖЕЛѢЗНАЯ ДОРОГА

ОБЪЯВЛЕНІЕ

Съ 9 Апрѣля будутъ въ движеніе товаропассаѣирскіе поѣзда: № 5 отъ Поти до Тифлиса и № 6 отъ Тифлиса до Поти по нижеслѣдующему росписанію.

Поезд № 5					Поезд № 6				
Станции.	Приходь		Отходь		Станции	Приходь		Отходь	
	ч.	м.	ч.	м.		ч.	м.	ч.	м.
Поти	—	—	6	45	Тифлисъ	—	—	12	56
Ріонъ	1	25	2	20	Гори	4	15	4	35
Квириди	3	46	4	39	Михайлово	6	25	6	45
Михайлово	9	36	10	06	Квириди	11	44	12	15
Гори	11	55	12	20	Ріонъ	1	24	1	54
Тифлисъ	3	51	—	—	Поти	6	35	—	—

Пасажи́рські поїзда: № 1 ізъ Поти и № 2 ізъ Тифлиса, а также товаропаса-
жирські поїзда № 7 ізъ Сурама № 8 ізъ Тифлиса будуть въ движеніи по прел-
нимъ росписаніямъ.

Ամսոյս 8-ին Տփլիսեցի գե-
րամեծը պ' Նիկողայոս Տէր-Յա-
կոբեանց աշխարհածանօթ անձը
իւր գործոյ զբաղմունքներէն ստի-
պուած պատահելով Շարուր գա-
ւառի Խանըկալար գիւղում որը
84 տուն հայազգի բնակիչներէ
կը բաղկանայ, և ունի մի եկեղե-
ցի սուրբ Սարգիս անուամբ կա-
ռուցեալ, և մի ծխական դպրոց
եկեղեցւոյ բակում, որի մէջ այժմ
կան 50-ի չափ ուսանողներ և մի
ուսուցիչ, որ դաս է խօսում հայե-
րէն, ռուսերէն և պարսկերէն, ստա-
նալով իւր վարձը իւրաքանչիւր
ուսանողներէրից:

Իսկ այս անգամ վերողբեալ աղգասէր իշխանը, տեսնելով դրպրոցի բաւականի չափ դաստիարակութիւնը, և գիւղացւոց ջերմեռանդութիւնը դէպի ուսում, մէկէն իւր ազգասիրական եռանդը շարժելով, մի ժապաւինեալ տումար կազմեց դպրոցիս դրամագլուխ ունենալու համար, ու ինքը նախաբար ստորագրեցաւ, վճարելով կանխիկ 240 ռուբլ ու խոստացաւ կրկին շատացնելու գումարը այլ և այլ աղգասէր անհատներէց, որոյ բնիկ աղգասէր իշխանութեանը մեր խորին շնորհակալութիւնը կը մատուցանեմք:

Մահտեսի Ռուբէն Լճիմեանց:

1-3

ПОРТНОЙ ИЗЪ ПЕТЕРБУРГА ГЕР-
МАНЪ на Гановской улицѣ въ домѣ
Іоанисіани. Имѣю честь извѣстити поч-
теннейшей публикѣ, что принимаю за-
казы своими товарами военныя и стат-
скія платья и исполняю собственнымъ
присмотромъ и также отдаю на прокатъ
разныя костюмы кромѣ того въ моемъ
магазинѣ имѣются мужскія и дѣтскія
костюмы. Заказы и продажа производит-
ся по весьма умѣреннымъ цѣнамъ.

ԲԱՐՁՐԱԳՈՅՆ Հաստատված ՁԱՔԱՐԻ ԳՈՐԾԱՐԱՆՆԵՐԻ ԱԼԷԲՍԱՆԴՐԵԱՆ Ընկերությունը պատ

տիւ ունի յայտնել պատուելի հասարակու-
թեանը, որ նա իր հաւատարմատար Լ.

ԳՈՒԵԱԿԻ միջոցով ԹԻՖԼԻՍՈՒՄ սկսել է
 թե՛ կոտրած և թե՛ կոտրած և թե՛ զբւ-
 րավել ԲՐՈՒՄՅԱՌԻ շաքարի առուտոր: Այդ ա-
 ռուտորը մինչև այժմ պ. Ալեյզովի ձեռքին
 է: **ԳՐԱՍԵՆՆԱԿԻ** գտնվում է Թա-
 մանշեյի ջարպամանաբայում, Պատանժում, եր-
 կրորդ յարկ: **ԳՈՒԵԱԿԻ** 4-4.

Բժիշկ Անտոն Բարսեղյան (Բարսեղյեւ) ընդունում է հիւանդներին Թիֆլիսի բժշկանոցում՝ չորեքշաբթի, հինգշաբթի և շաբաթ օրերը ջրային և հողեկան հիւանդութիւններ բժշկելու: Բացի այդ բժիշկ Բարսեղյան (Բարսեղյեւ)՝ հինգշաբթի և շաբաթ օրերը առաւօտեան 9—10 ժամը ընդունում է իր սանր ներքին հիւանդութիւններ ունեցող հիւանդներին: Հասցէն՝ Սրբգեղեգկայա փողոցում: Բայանդուրով:

10-10

ԿՈՒԿՐՈՒՄԻ, Մասնավայր փողոցի վրա,
 Վ արանցովի արձանի մոտ, Վ լադիմեր Լ ա.
 բնակիչ Սիկեզյի շինությունների մէջ (որ էր
 Մարգարեանի)ը, եւ Գիւրմայով րաց արի
 նոր Գիւնեկ ԷՃԱՌԱՆՆՈՅ, որպէս ծա-
 խովում են ՀՆԷԼԵՎ ԼԻՐԻ ԲՆԵԿԵՆ ՆԻ
 ԴՆՍԻՐ ՏԵՍԵԿԻ գինիք իմ սեփական այ-
 գինիքից: Հեջ 25 կողկէ և աւելի: Մեծ
 յուսով եմ որ ԹԻՖԼԻՍԻ Տասնարկուծիւնը
 արանց ուշադրութեան չե թողնէ իմ գինիների
 թէ արժանաւորութիւնը ու թէ բնակչաւորութիւնն
 ու անհառնորդութիւնը:

Արդան տէր—Պողոսեան:

Ավետայն օր կարելի է գտնել ԹԱՐՄ
ԵՒ ԻՍԿԱԿԱՆ ԿՈՒՄԻՏԵՍ, որ ար-
տասագմանի բժիշկները և պրոֆեսորները
հաւանած է և **ԸՆԾԱՆԵՐ** է ստացել
Վիկենայի և Փարիզի աշխարհագրագետներում:
Ս. Կ **ԿՈՒՄԻՏԵ** բացառութիւն է (յայ-
տնում եմ, որ այդ կումիտը փորձված է և
ՄԵՐԵ Ժամանակ: ՀԱՍՅԷՆ Բольшая Водо-
возная փողոց և. № 20 Սպարկիի գորա-
տունների շինաց: Նոյնպէս Ժալպուժ և
Дворцовая փողոցի վրա, Թանգարանի գի-
մար, Նարուրովի տան Աջ գտնված ԿԱԹՆԻ
ԻՍ.ՆՈՒՐՈՒ ՄԷջ:

2-3

ԱՊՐԻԼԻ 24

8 6 7 6 4 5 3 0 6 8

1879

ԹԻՖԼԻՍԻ ՎԱՃԱՌԱՆՈՑ	Ր.	Կ.	ԼՅՈՒՍԻՐ	Ր.	Կ.	ՓՕԹԻ-ԹԻՖԼԻՍԻՍԵԱՆ ԵՐԿԱՆ-ՔՈՐԴԻ	ՓՕՍՏ	ԲԺԵԿԱՆՈՑ	«ՄԾԱԿԻ», ՊԱՏԱՄԱՆՆԵՐ
(Ապրիլի 23-ին)									
Ոսկին (պոլոմպերիալը)	8	55	Կովկասի և Ան-			Թիֆլիսից մինչև Փոթի		Ամեն տեսակ թե՛ նա-	Հիւանդների ընդունելու-
2/ին 82 պր. մ. արծ. 1000 մ.	1500	—	դրվովկասի քա-			(հասնողները) 9		մակներ, թե՛ լրագրիներ և	թիւեր ժամը 9-ից մինչև 1
Հին 20 Կ. 72 պր. 1000 „	1740	—	ղաքները	1		ժամին 21 րոպէ առաւօտեան:		թե՛ ծանր փոստ ամեն տեղ	ժամը կէսօրից յետոյ:
Վարդին 50% առաջի փո-	241	—	Ռուսաստան	2		Մինչև Միխայլով (խառն		ուղարկելու, ընդունվում	Երկրպագութի. Լիւի-
խառնվեան տոմ. 100 „	238	—	Աւստրիա	3		գնացքը) երեկոյեան 5 ժամ, 18		են ամեն օր, առաւօտեան	ցեղ և Գորախովի ներքին
Երկրորդ 5% վրդիչին :	100	—	Անգլիա	4		բացէ:		8 ժամից մինչև 1 և կէսօրից	հիւանդութիւններ, Գուա-
Մարտի կուրսը 244—			Գերմանիա	2	88			յետոյ 3 ժամից մինչև 7,	րեանց վերաբուժական և
Լոնդոնի կուրսը Օդեսայի			Ֆրանսիա	3	75			խախտի օրերը հասա-	կանաց հիւանդութիւն-
վրա.	105	19						րակ նամակներ մինչև 10	ներ:
Վենայի կուրսը ամէ 113 գր.	100	—						ժամ առաւօտեան և 3—7	կը չենք կարող տպել:
Դաւոնի քարայր	5	65	ԱՆԴՐԿՈՎՎԱՍՏԵԱՆ ՄԱՆ-			Թիֆլիսից	9.21 5. 18	երեկոյեան.	— ԱՍՄԱԼԻԱՎԱՔ. Հ. Չ. Մեղ
Առեւտրական բանկի աղ-			ԿԱՐԱՐՁԱԿԱՆ ԴՊՐՈՑ			Գորի	11.58 9. 43	Արտաստանից և	լնչ որ ձեր կոնֆետների ա-
կան 200 մ.	320	—	(Վերայի վրա № 38)			Միխայլով	1. 39 11. 57	փոստը ստացվում է Թիֆ-	կոները ընկիւ և կոտրվել են:
Փոթի Թիֆլիսեան երկա-	102	—				Րիւն	6. 47	լիսում ամեն օր, Բա-	կարծում էք մենք կը տպելք
թուղու աղկախ 125 մ.						Փոթի	9. 40	գունի տրակտից երեք-	սյգ տեսակ բան: Եթէ դու-
Շաքարը բրոցիւ.	7	40	Ծննդականների ընդու-					շաքթի և շաքար օրերը.	նուէր մէկը և քրքրէր մեր
„ միւս տեսակը	7	30	նեւ լուծիւնը գերեկվայ			Փոթիից	9. 13	Երևանի տրակտից եր-	գամիւրը, շատ հետաքրքիր
„ շաքար աւաղը	5	60	և գիշերվայ ամեն ժամա-			Րիւն	12. 13	կուշաթի, հինգաթի և	յիւանդութիւններ կը գտնէր
„ տրանզիւր	5	80	նակ, օրը 50 կոպէկ վար-			Միխայլով	5. 39 1 37	քաթի, Փոթի-Թիֆ-	նրա մէջ:
„ մարքի վարած	12	50	ձով, իսկ չաւորներին ան-			Գորի	7. 5 4 8	լիսեան Կոնստանդու-	— ՀԻՆԵԱՄԻՋԵՆԱՆ. Ն. Փ.
Բ. մըս կը երևանու Ա-			վարձ, Առանձին սենեակ			Թիֆլիս	9. 31 7. 56	ման օր, Կոնստանդու-	Նամակը գամիւրը գցցելը:
մերիկայի սերմից	7	60	ներում ամիսը 30 — 50					տից չորեքշաբթի և կի-	— ԵՐԵՎԱՆ. Ա. Եր. Թեմական
Միւս տեսակը հին սերմից.	7	—	րուրը, կանանց հի-					րակի Բելիկովի տը-	տեսչի օդականը ուղևորվեա-
Բուրգը թուշ	7	50	ւան դուծիւններ և					րակտից երեքշաբթի և շա-	կանաց և երեսներին
„ Թարաքամի	4	20	բաժանմունքի մէջ վարձը					բաթ.	հ. և մանկաբարձութեան:
Ալիւրը Շորազաւու	1	70	ընդհանուր սենեակում 18						Շաբաթ. Վերսիլից ներ-
„ Երևանի	—		րուր, իսկ մասնաւոր սե-						քանց հ. և մանկաբարձութեան:
			ներակներում 30 րուրը ամ-						
			սական:						
Գարին	1		Երթի եւ հիւանդ կա-						
Մեծ քանապուր (серап.)	12	60	նանց և երեկոյեան ըն-						
Մետաղաքը Նուխլայ	200	—	դունելութիւնը ամեն օր,						
Կախեթ ունը	140	—	բացի կերակի օրերից, 9½						
Կոկոնը Նուխլայ (սոմ.)	40	—	մինչև 11 ժամ առաւօ-						
Ֆրիզոնը (լասը) Ագու-	55	—	տեան, Բժշկապետ Անա-						
կաջ	27	—	նով:						
Կօֆէն մօկօր	22	—							
„ Ժանի	22	—							
„ Մարտինօյին	18	—							